ԿԱՆԱԴԱՅՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԵՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ
ՀՅՈՒՊԱՏՈՍԱԿԱՆ ԲԱԺԻՆ
EMBASSY OF THE REPUBLIC OF ARMENIA
CONSULAR DIVISION
7 DELAWARE AVE., OTTAWA, ONTARIO, K2P 0Z2
TEL. (613) 234-3710 FAX (613) 234-3444 E-mail: embarmconottawa@rogers.com

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ՝ ՀՀ ՎԵՐԱԴԱՐՁԻ ՎԿԱՅԱԿԱՆ

Հայաստանի Հանրապետության վերադարձի վկայականը ժամանակավոր ճամփորդական փաստաթուղթ է՝ օտարերկրյա պետություններից Հայաստան վերադառնալու համար: Այն տրվում է ՀՀ քաղաքացու անձնագիրը կորցրած կամ փչացրած, ինչպես նաև նախկին ԽՍՀՄ անձնագրով կամ անձնագրի ներդիրով (երեխաներ) երկրից մեկնած այն քաղաքացիներին, որոնք պետք է շտապ վերադառնան/այցելեն Հայաստան և ժամանակ չունեն նոր անձնագրի համար դիմելու:

ՀՀ վերադարձի վկայական ստանալու համար պետք է Կանադայում ՀՀ դեսպանության հյուպատոսական բաժին ներկայացնել հետևյալ փաստաթղթերը.

ա/ Ծնողները անձնագրի ներդիրով Հայաստանից մեկնաց անչափահաս երեխաների համար.

1. Սահմանված ձևի դիմում (կցվում է)
2. Երեխայի անձը հաստատող փաստաթղթեր (ծննդյան վկայական, ծնողի՝ նախկին ԽՍՀՄ անձնագրի մեջ գրանցում կամ ՀՀ անձնագրի մեջ ներդիր, որն ուժը կորցրել է)
3. Ծնողների անձնագրերի պատճենները
4. Ծնողներից մեկի՝ ՀՀ քաղաքացի չլինելու դեպքում վերջինիս նոտարով հաստատված համաձայնագիրը, որ երեխան լինի ՀՀ քաղաքացի
5. Անձնագրային չափսի երկու գունավոր լուսանկար

բ/ Կորսված կամ գողացված անձնագրի դեպքում.

1. Սահմանված ձևի դիմում (կցվում է)
2. Ոստիկանության արձանագրություն (Police Report) անձնագրի կորստի վերաբերյալ
3. Անձնագրային չափսի երկու գունավոր լուսանկար
4. Կորսված անձնագրի լուսապատճենը (առկայության դեպքում)

5. Հայաստանյան ծագում ունեցող անձը հաստատող փաստաթղթեր (զինվորական գրքույկ, վարորդական իրավունք՝ առկայության դեպքում)
6. Պետական տուրք՝ 75CAD վճարման անդորրագիր (money order or certified check payable to the Embassy of Armenia)

գ/ Փչացված կամ ժամկետանց անձնագրի դեպքում.

1. Սահմանված ձևի դիմում (կցվում է)
2. Անձնագիրը
3. Անձնագրային չափսի երկու գունավոր լուսանկար
4. Պետական տուրք՝ 75CAD վճարման անդորրագիր (money order or certified check payable to the Embassy of Armenia)

<u>Ծանոթագրություն</u>

1. Վերադարձի վկայականը տրվում է երկու ամիս ժամկետով՝ ձևակերպման օրից:
2. Սույն հյուպատոսական ծառայությունը կատարվում է 3-4 աշխատանքային օրվա ընթացքում՝ անձը հաստատող փաստաթղթերի առկայության դեպքում: Վերջիններիս բացակայության պարագայում՝ 4-6 շաբաթվա ընթացքում:
3. Փաստաթղթերը փոստով ուղարկելիս, պահանջվում է նաև որևէ պատվիրված փոստի /registered mail, FedEx, Purolator, և այլն/ <u>նախապես վճարված հետադարձ ծրար</u>՝ փաստաթղթերը վերադարձնելու համար:
4. Կանադայում ՀՀ դեսպանությունը պատասխանատվություն չի կրում փոստային ծառայության պատճառով կորած փաստաթղթերի համար:

ԴԻՄՈՒՄ- ՀԱՐՑԱԹԵՐԹԻԿ
ՀՀ ՎԵՐԱԴԱՐՁԻ ՎԿԱՅԱԿԱՆ ՍՏԱՆԱԼՈՒ
ՀԱՄԱՐ

լուսանկարի համար

Անձնագրիս կորստյան/նախկին ԽՍՀՄ անձնագրի ժամկետի կամ ներդիրի վավերության սպառման պատճառով (անհրաժեշտն ընդգծել) խնդրում եմ ինձ հատկացնել ՀՀ վերադարձի վկայական: Իմ մասին հայտնում եմ հետևյալ տեղեկությունները.

1. Ազգանուն _____ Անուն _____ Հայրանուն _____

2. Ծննդյան թիվ և վայր _____

3.Քաղաքացիություն_____

4. Հայաստանում բնակվելու (գրանցման) վայր_____
(քաղաք/ գյուղ, փողոց, տուն, բնակարան)

_____Հեռախոսի համարը_____

9. Տեղեկություններ անձը հաստատող առկա փաստաթղթերի մասին

_____

_____
(անվանում, համար, երբ և որ մարմնի կողմից է տրված)

10. Հայաստանից ելքի ամսաթիվ _____ Մեկնման նպատակ _____

11. Կանադայում ներկա բնակության վայր /լատինատառ/

_____
(հասցե, հեռախոսի համար)

12. Անհրաժեշտության դեպքում կարելի է կապնվել ՀՀ-ում բնակվող իմ հետևյալ ազգականի հետ

_____
(ազգանուն, անուն, լրիվ հասցե, հեռախոսի համար)

13. Հայաստան վերադառնալու ամսաթիվը _____

14. Հայաստան վերադառնալու տրանսպորտի միջոց և երթուղի _____

Ստորագրություն _____ "_____" _____200 թ.